

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

«Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով»

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/1

12 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց «ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ» ՍՊԸ 17.07.2013 թ-ի բողոքը «ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.05.2013 թ-ի թիվ 2101422 ստուգման ակտի դեմ»:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 2013 թ-ի ապրիլի 25 թիվ 2101422 հանձնարարագրի «ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը «Օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է «ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.05.2013 թ-ի թիվ 2101422 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով եկամտային հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 29.400.000 դրամ:

«ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ» ՍՊԸ կողմից ստուգման ակտի դեմ 17.07.2013 թ-ին «ԿԱ պետական եկամուտների կոմիտե» ներկայացվել է բողոք:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի վերաբերյալ հարկ է նշել, որ «ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում «ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ-ից փաստաթղթեր են ստացվել «ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ» ՍՊԸ չկատարված հարկային պարտավորությունների վերաբերյալ, որում ընդգրկված է նաև ստուգման ակտով առաջադրված գումարը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ «ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում նյութեր են նախապատրաստվում ընկերության գործունեության կապակցությամբ քրեական գործի հարուցման հարցը պարզելու նպատակով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության 17.07.2013 թ-ի բողոքի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«ԴԵԼՏԱ ՌԻԹԵԻԼ» ՍՊԸ 17.07.2013 թ-ի բողոքի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահի օրինակ



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ